

ՈՐՈՇՈՒՄ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼՔԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՄՇԱԿՎԱԾ
ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

24.01. 2021թ.

N 02

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թ. հունիսի 30-ի N 978-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ-ում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի /այսուհետ՝ Հավատարմագրման կարգ/ 37-րդ և 38-րդ կետերով, Հիմնադրամի տնօրենի, քարտուղարության ղեկավարի, ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարի, հավատարմագրման գործընթացի համակարգողի մասնակցությամբ քննարկեց «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2021 թվականի դեկտեմբերի 17-ին ներկայացրած ինստիտուցիոնալ կարողությունների լրամշակված ինքնավերլուծությունը և, հիմք ընդունելով հավատարմագրման գործընթացի համակարգողի եզրակացությունը՝

ՈՐՈՇԵՑ

1. «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ներկայացրած ինստիտուցիոնալ կարողությունների լրամշակված ինքնավերլուծությունը հիմնականում համապատասխանում է Հավատարմագրման կարգով հաստատված սահմանված պահանջներին:
2. Ընդունել «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ներկայացրած ինստիտուցիոնալ կարողությունների լրամշակված ինքնավերլուծությունը:

Տնօրեն



Ռ.Թովչյան